0157100011

Reçu CLT / CIH / ITH
Le 27 MARS 2013
N° 0178

# 02-2

# Certificate of National Nomination

Republic of Armenia

REFERENCE

# GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

# DECISION

No 238 – A of 14 March 2019

**ON MAKING SUPPLIMENTS IN DECISION N 310-A OF 11 MARCH 2010 OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**

---

Based on the Article 34 of the law of the Republic of Armenia "On Normative Legal Acts", the Government of the Republic of Armenia hereby decides: to supplement the Annex N 2 of the Decision of the Government of the Republic of Armenia N 310-A of 11 March 2010 "On Approving the Criteria of Compiling Lists of Intangible Cultural Values and the List of Intangible Cultural Values of the Republic of Armenia" with a new point 33, in accordance with the Annex.

PRIME MINISTER
OF THE REPUBLIC OF ARMENIA N. PASHINYAN

# Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov

## Կառավարության որոշումներ

14 Մարտի 2019, 238 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 310-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.
Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 310-Ա որոշման N 2 հավելվածը լրացնել նոր՝ 33-րդ կետով՝ համաձայն հավելվածի:
Հավելված

**Նիկոլ Փաշինյան**

Reçu CLT / CIH / ITH
Le 27 MARS 2019
N° 0178

# 04-2

# National Inventory List

Republic of Armenia

Annex

to the Decision of the RA Government 2019

N 238 - A of 14 March

**LIST**
**OF VALUES OF INTANGIBLE CULTURAL HERITAGE OF THE REPUBLIC OF ARMENIA**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 33. | Pilgrimage to St. Apostle Thaddeus Monastery | National belief, festival, Christian pilgrimage | Yerevan, RA marzes of Gegharkunik and Kotayk, Dioceses of Tavriz of the Armenian Apostolic Church and Tehran, regions of Iran populated with the Armenians | The community of followers of the Armenian Apostolic Church in Armenia and other countries, Iranian-Armenian community, Armenian population in the Islamic Republic of Iran | St. Thaddeus Monastery is one of the first evidences of establishing Christianity in the Historical Armenia. It is situated in the historical district of Artaz, in the current region of Maku, Iran. It was built on the commemoration of the Apostle Thaddeus, the founder of the Armenian Apostolic Church, who was, as legend says, persecuted and killed in 44 for spreading Christianity. Since the foundation of St. Thaddeus Monastery (4-7 centuries), it has had a viable community, has been the center of Atrpatakan Diocese of the Armenian Apostolic Center for centuries, as this territory had a dense population, as well as churches and monasteries (nearly 180-223, out of which 42 survived). As a standing ancient holy place of the Christian world and a universal cultural property, since 1955 the Monastery has been in the list of historical monuments of Iran. In 2008, it was inscribed in the list of world heritage of UNESCO. The Monastery has always been an islet of the Armenian identity for | As legend says, the body of the Apostle Thaddeus is placed in the Monastery, which, from the perspective of world Christian dogma as well as for the Armenian people, makes it a unique spot for the religious and cognitive visits. On 30 July, 1954, for the first time after a long break, a pilgrimage was organized by a group of believers by difficult roads. The purpose was to bring the knowledge of St. Thaddeus Monastery into attention, to restore the erstwhile glory of the Monastery which was gone due to the Armenian depopulation in the territory, as namely the Iranian-Armenian Community was connected with the Monastery with reverence and ardour. With the support of the Islamic Republic of Iran, the roads were improved, as a result of which the number of pilgrims in 1968 reached 12.000.<br><br>The event became annual, when each year 5-6 thousand Armenians started participating in the pilgrimage to St. Thaddeus Monastery, which lasts 3-4 days. The pilgrims stay in the tent town organized near the Monastery, continuing the traditions of folk pilgrimages. By the visits to the | St. Thaddeus Monastery and the pilgrimage to the Monastery are the expression of the Armenian cultural age-old existence and continuity in Iran, a special dialogue of efforts and successes to maintain the cultural and religious identity.<br><br>Though being restarted after a long break, the pilgrimage keeps the main features of the national pilgrimages common for the traditional culture of Armenian people – volunteering, visits with families and relatives, folklore entertainment.<br><br>There is no Armenian population in the surrounding of St. Thaddeus Monastery, and actually, the annual pilgrimage is an important event for saving the Monastery from “solitary and oblivion”. It is also a unique spontaneous cultural dialogue – a method to express the mutual recognition as well as respect and tolerance among the Armenian people gathered from different regions of Iran: Tehran, Tabriz, and other territories, arrived from all over the world, |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | the dense Armenian population, thousands of pilgrims have relied on the miraculous power of the Monastery, and it has been a center of learning. Due to the destructions of Tatar-Mongols, robbery, and the ruinous consequences of earthquakes, the Monastery periodically underwent repairs and constructions. The repair and preservation works of the Monastery were usually done thanks to the donations of the Community, which is an evidence of the popularity of the Monastery. By the Treaty of Turkmenchay concluded after the Russo-Persian War in 1826-1828, as a result of resettlement of Armenians from the territory to the territories under the Russian possession, nearly 80 villages of Maku, the majority of them belonged to the Monastery, were emptied, and Tabriz became the diocese center instead of Thaddeus Monastery, which had been a diocese center for centuries. The complex, which had once had an active monastic life, was gradually fading. In the end of $19^{th}$ century till the First World War, this Monastery, under the alias Solitary, became a transit horde for the Armenian armed forces leading to Vaspurakan, accepting Andranik, Aram Manukyan and others. During the Genocide of 1915, it | holy place with families, groups of relatives, friends, folk music, drum beats, dances, festivities, worships, baptisms, the community and family links are re-established, historical memories are refreshed, acknowledged, recnognized, and transferred, a cultural dialogue is carried out. Upon sharing the holy water blessed with Chrism to the pilgrim visitors at the end of Water Blessing Ceremony done after the Canonical Hour, the festival spirit is transmitted.<br><br>After the independence of Armenia, the participation in the pilgrimage to the ancient Armenian center of Christianity by the visitors from Armenia though in small groups, has restarted.<br><br>One of the third initiators of the pilgrimages was the group of believers of St. Hovhannes Mkrtich Church, Yerevan, leading by the Archpriest Ter Tirayr Sardaryan. | pilgrims, visitors, other Christian pilgrims arrived from Armenia, as well as Persians, Assyrians, Kurdish residing in that region.<br><br>At the same time, the pilgrimage complements, enriches and justifies the inclusion of St. Thaddeus Monastery, St. Stephen Martyr and other Armenian churches situated in Iran in the safeguarding program of UNESCO, every year demonstrating the fact of carriers of this cultural heritage having a stable and loyal community. The pilgrimage requires a combination of huge organizational efforts of the Armenian Apostolic Church, the Islamic Republic of Iran and pilgrims' community. This all contributes the preservation of ancient Christian evidences, awareness of historical-cultural heritage of the Armenians in Iran, activation of Armenia-Iran cultural and economic relations, discovery of new opportunities of mutual recognition. The pilgrimage creates a possibility for the participants to preserve the connection with the historical heritage, and the environment and territory presenting that heritage; it is a possibility for the participants to get spiritual satisfaction and relaxation; it strengthens the social links of the community, as well as the |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | became a shelter and lifebuoy for the survived population of Armenian villages of Turkish-Persian border. In June, 1918, the Ottoman army surrounded the Monastery, and killed the Armenian people who were hiding behind the enclosure of the Monastery. It finally got empty when very few Armenian families of the territory migrated to the Soviet Armenia in 1946 and the parishioners of the Monastery broke away from their Monastery. In 1961, Tabriz Diocese was separated from Etchmiadzin's Catholicosate of All Armenians, and was merged to the Catholicosate of the Great House of Cicilia. | | transition and development of group entity and historical continuity.<br><br>In this regard, the community of believers of St. Hovhannes Church in Yerevan is special: since 2007, it has been organizing pilgrimages to St. Thaddeus Monastery. |

RA Ministry of Culture

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
մարտի 14 -ի N 238 - Ա որոշման

# ՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 33. | Սուրբ Թադեոս առաքյալի վանքի ուխտագնացությունը | ժողովրդական հավատալիք, տոն, քրիստոնեական ուխտագնացություն | Երևան քաղաք, ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր, Հայ առաքելական եկեղեցու Թավրիզի և Թեհրանի թեմեր, Իրանի հայաբնակ շրջաններ | Հայ առաքելական եկեղեցու հետևորդների համայնքը Հայաստանում և այլ երկրներում, իրանահայ համայնք, Իրանի Իսլամական Հանրապետության հայ բնակչություն | Սուրբ Թադեոսի (Թադեի) վանքը համարվում է քրիստոնեության հաստատման առաջին վկայություններից պատմական Հայաստանում: Այն գտնվում է պատմական Արտազ գավառում, ժամանակակից Իրանի Մակուի շրջանում: Կառուցվել է Հայ առաքելական եկեղեցու հիմնադիր համարվող առաքյալներից Թադեոսի հիշատակին, որն ըստ ավանդության, քրիստոնեություն տարածելու համար հալածվեց և սպանվեց 44 թ.: Ս. Թադեոսի վանքը հիմնադրումից ի վեր (4-7-րդ դդ.) իր շուրջն ունեցել է կենսունակ համայնք, դարեր շարունակ եղել է Հայ առաքելական եկեղեցու Ատրպատականի թեմի կենտրոնը, քանի որ տարածքը ուներ խիտ հայ բնակչություն և եկեղեցիներ ու վանքեր (թվով 180-223, որոնցից այսօր կանգուն են 42-ը): | Ըստ ավանդության՝ վանքում ամփոփված է Թադեոս առաքյալի մարմինը, ինչը համաշխարհային քրիստոնեական դավանանքի տեսանկյունից և հայերի համար վանքը դարձնում է առանձնահատուկ կետ կրոնական և ճանաչողական այցելությունների համար: 1954 թ. հուլիսի 30-ին առաջին անգամ երկարատև ընդմիջումից հետո կազմակերպվում է ուխտագնացություն մի խումբ հավատացյալների կողմից, դժվարամատչելի ճանապարհներով: Նպատակն էր՝ Ս. Թադեոսի վանքի մասին գիտելիքի շրջանառությունը ու շադրության կենտրոնում պահելը, տարածքի հայաթափման արդյունքում վանքի երբեմնի փառքը վերականգնելը, քանի որ հատկապես իրանահայ համայնքը առանձնակի ակնածանքով ու ջերմեռանդությամբ էր կապված վանքի հետ: Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ բարեկարգվում է ճանապարհը, որի արդյունքում էլ 1968 թ. ուխտագնացների թիվը կազմում էր 12.000: | Ս. Թադեոս վանքը և նրա շուրջ ծավալված ուխտագնացությունը Իրանում հայկական դարավոր մշակութային ներկայության և շարունակականության, մշակութային, կրոնական ինքնատիպությունը պահպանելու ջանքերի ու հաջողումների առանձնահատուկ երկխոսության դրսևորում է:<br><br>Ուխտագնացությունը, թեպետ վերսկսվելով երկարատև ընդմիջումից հետո, պահպանում է հայերի ավանդական մշակույթում տարածված ժողովրդական ուխտագնացություններ ի հիմնական գծերը՝ կամավորությունը, ընտանեկան կամ ազգակցական խմբերով այցելությունները, ժողովրդական զվարճանքները:<br><br>Ս. Թադեոսի վանքի շրջակայքում այսօր |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Որպես համաքրիստոնեական կանգուն հնագույն սրբատեղի և իբրև համամարդկային մշակութային արժեք՝ 1955 թվականից վանքը ներառված է Իրանի պատմական հուշարձանների ցանկում, իսկ 2008 թ. ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Վանքը մշտապես հայկական ինքնության կղզյակ է հանդիսացել տարածքի հոծ հայ բնակչության համար, վանքի հրաշափառ զորությանը ապավինել են հազարավոր ուխտավորներ, հանդիսացել է գրչության կենտրոն: Մոնղոլ թաթարական ավերածությունների, կողոպուտի և երկրաշարժերի ավերիչ հետևանքների պատճառով վանքը ենթարկվել է պարբերական վերանորոգումների ու կառուցումների: Վերանորոգումները և վանքի պահպանության աշխատանքները հաճախ իրականացվել են համայնքի հանգանակությունների միջոցով, ինչը վանքի ժողովրդականության | Միջոցառումը դարձավ տարեկան, երբ ամեն տարի 5-6 հազար հայեր սկսեցին մասնակցել Ս. Թադեոսի վանքի ուխտագնացությանը, որը տևում է 3-4 օր: Ուխտավորները հանգրվանում են վանքի շուրջ կազմակերպված «վրանաքաղաքում»՝ շարունակելով ավանդական ժողովրդական ուխտագնացությունների ավանդույթները: Ընտանիքներով, ազգականների խմբերով, ընկերներով սրբավայր այցելությամբ, ժողովրդական երաժշտությամբ, թմբուկների զարկերով, պարերով, խնջույքով, մատաղի արարողություններով, մկրտություններով վերահաստատվում են համայնքային և ընտանեկան կապերը, տեղի է ունենում պատմական հիշողության վերաթարմացում, ճանաչում, փոխանցում և մշակութային երկխոսություն: Ժամերգությունից հետո կատարվող Ջրօրհնեքի ավարտին մյուռոնով օրհնված ջուրը ուխտավոր այցելուներին բաժանվելով՝ փոխանցվում է տոնի խորհուրդը: Հայաստանի անկախությունից հետո թեպետ փոքր խմբերով, վերսկսվում է Հայաստանից այցելուների մասնակցությունը ուխտագնացությանը որպես քրիստոնեության հայկական հնագույն կենտ- | չկա հայ բնակչություն և վանքն ըստ էության «մենությունից ու մոռացությունից» փրկելու կարևոր միջոցառում է տարեկան ուխտագնացությունը: Այն նաև յուրատեսակ ինքնաբուխ մշակութային երկխոսություն է Իրանի տարբեր շրջաններից՝ Թեհրանից, Թավրիզից և այլ տարածքներից միացած հայերի, աշխարհի տարբեր կողմերից ժամանած հայերի և Հայաստանից այցելած ուխտավորների, այցելուների, այլ քրիստոնյա ուխտավորների, տեղանքում բնակվող պարսիկների, ասորիների, քրդերի փոխադարձ ճանաչողության ու միմյանց հանդեպ հարգանքի ու հանդուրժողականության դրսևորման օրինակ:<br><br>Միաժամանակ, ուխտագնացությունը համալրում, հարստացնում և հիմնավորում է Ս. Թադեոսի, Ս. Ստեփանոս Նախավկայի և Իրանի հայկական եկեղեցիները |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | վկայությունն է: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո կնքված Թուրքմենչայի պայմանագրով տարածքի հայերի՝ ռուսական տիրապետության տակ գտնվող տարածքներ տեղափոխվել ու արդյունքում դատարկվում են Մակուի շուրջ 80 գյուղեր, մեծ մասը վանքապատկան, իսկ դարեր շարունակ թեմական կենտրոն հանդիսացող Թադեոսի վանքի փոխարեն թեմական կենտրոն է դառնում Թավրիզը: Սկսվում է երբեմնի ակտիվ վանական կյանք ունեցող համալիրի աստիճանական մարումը: 19-րդ դարավերջից մինչև առաջին աշխարհամարտը այս վանքը՝ Մենավորի վանք ծածկանունով դառնում է հայկական զինատար խմբերի դեպի Վասպուրական տանող ուղղության տարանցիկ հանգույց՝ ընդունելով Անդրանիկին, Արամ Մանուկյանին և այլոց: Ապաստարան ու փրկօղակ է դարձել 1915 թ. եղեռնի ժամանակ թուրք-պարսկական սահմանի հայկական գյուղերի | րոն: Ուխտագնացությունների առաջին նախաձեռնողներից էր Երևանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հավատացյալների խումբը՝ քահանա Տեր Տիրայր Սարդարյանի գլխավորությամբ: | ՅՈՒՆԵՍԿՕ-ի , պահպանության ծրագրում ներառելը՝ տարեցտարի ցուցադրելով այս մշակութային ժառանգությունը կրողների կայուն ու հավատարիմ համայնք ունենալու փաստը: Ուխտագնացությունը պահանջում է Հայ առաքելական եկեղեցու, ԻԻՀ և ուխտավորների համայնքի կազմակերպչական մեծ ջանքերի համադրում: Այս ամենը նպաստում են հայկական քրիստոնեական վաղագույն վկայությունների պահպանությանը, Իրանում հայերի պատմամշակութային ժառանգության հանրահռչակմանը, Հայաստան-Իրան մշակութային, տնտեսական կապերի աշխուժացմանը, փոխճանաչողության նոր հնարավորությունների բացահայտմանը: Ուխտագնացությունը հնարավորություն է ստեղծում մասնակիցների համար պահպանել ու կապը պատմական ժառան- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մազապուրծ բնակչության համար: 1918 թ. հունիսին օսմանյան զորախումբը շրջապատում է վանքը, ապա կոտորում վանքի պարիսպների հետևում թաքնված հայերին: Վանքը վերջնականապես դատարկվում է, երբ տարածքի սակավաթիվ հայ ընտանիքները 1946 թ. ներգաղթում են խորհրդային Հայաստան և վանքի երբեմնի ծխականները կտրվում են իրենց վանքից: 1961 թ. Թավրիզի թեմն անջատվում է Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությունից և միացվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: | | գության ու այս ժառանգությունը ներկայացնող միջավայրի, տարածքի հետ, հոգեկան բավարարման ու լիցքաթափման առիթ է հանդիսանում մասնակիցների համար, ամրապնդում է կրող համայնքի սոցիալական կապերը և խմբային ինքնության, պատմության շարունականության փոխանցումն ու զարգացումը:<br><br>Այս առումով առանձնահատուկ է Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցու հավատացյալների համայնքը, որը 2007 թ. ամեն տարի ուխտագնացություններ է իրականացնում Ս. Թադեոսի վանք: |